ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ, ԳԱՆՁԱՔԱՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

gandzaqar.tavush@mta.gov.am hեռ. 094606041

*18 ՀՈՒՆՎԱՐԻ 2017Թ. N 05 ՆԻՍՏԻ*

*01 - Ա ՈՐՈՇՈՒՄ*

ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Տեղական ինքնակառավարման մասին օրենքի 18 հոդվածի 5րդ կետով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

Համայնքի բյուջեում կատարել փոփոխություն.

ա/ տարեսկզբի ֆոնդային բյուջեի ազատ մնացորդը հաստատել 6293037դրամ, տարեսկզբի վարչական բյուջեի ազատ մնացորդը հաստատել 332384 դրամ:

բ/ ֆիզիկական անձանց գույքահարկի տարեկան պլանը 4100.0 հազ. դրամի փոխարեն հաստատել 5410.0 հազ. դրամ:

գ/ Հաստատել խմելու ջրագծի կառուցման համար համայնքի ներդրման ժամանակացույցը / կցվում է հավելվածը/:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Կողմ -7 դեմ -0 ձեռնպահ -0

1. Արման Բաղմանյանը /ստորագրություն/
2. Գեղեցիկ Դովլաթբեկյանը /ստորագրություն/
3. Ռադիկ Էլլարյանը /ստորագրություն/
4. Անուշավան Խաչինյանը /ստորագրություն/
5. Գեղամ Մալաքյանը /ստորագրություն/
6. Էմմա Հակոբյանը /ստորագրություն/
7. Սահակ Ստեփանյանը /ստորագրություն/

ԳԱՆՁԱՔԱՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏ Ա. ԴՈՎԼԱԹԲԵԿՅԱՆ

Հավելված

# ԽՄԵԼՈՒ ՋՐԱԳԾԻ ԿԱՌՈՒՅՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՆԵՐԴՐՄԱՆ

## Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Ց Ո Ւ Յ Ց Ը

| տարեթիվը | Վճ.ամիսը | գումարը |
|---|---|---|
| 2017թ | Հունվար | 500 000 |
| | Փետրվար | 500 000 |
| | Մարտ | 500 000 |
| | Ապրիլ | 500 000 |
| | Մայիս | 500 000 |
| | Հունիս | 500 000 |
| | հուլիս | 1.000.000 |
| | Օգոստոս | 1.000.000 |
| | Սեպտեմբեր | 1.000.000 |
| | Հոկտեմբեր | 1.500.000 |
| | Նոյեմբեր | 1.800.000 |
| | դեկտեմբեր | 1.853.537 |
| | ընդամենը | 11.153.537 |

ԳԱՆՁԱՔԱՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏ Վ.ԴՈՎԼԱԹԲԵԿՅԱՆ

*18 ՀՈՒՆՎԱՐԻ 2017Թ. N 05 ՆԻՍՏԻ*

*02 - Ն ՈՐՈՇՈՒՄ*

ՀԱՄԱՅՆՔԻ 2016Թ. ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Տեղական ինքնակառավարման մասին օրենքի 18 հոդվածի 5-րդ կետով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հաստատել Գանձաքար համայնքի 2016 թ-ի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող10-րդ օրը:

Հ Ա Մ Ա Յ Ն Ք Ի    Ա Վ Ա Գ Ա Ն Ի

Կողմ -7    դեմ -0    ձեռնպահ -0

1. Արման Բաղմանյանը /ստորագրություն/
2. Գեղեցիկ Դովլաթբեկյանը /ստորագրություն/
3. Ռադիկ Էլլարյանը /ստորագրություն/
4. Անուշավան Խաչինյանը /ստորագրություն/
5. Գեղամ Մալաքյանը /ստորագրություն/
6. Էմմա Հակոբյանը /ստորագրություն/
7. Սահակ Ստեփանյանը /ստորագրություն/

ԳԱՆՁԱՔԱՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏ    Վ.ԴՈՎԼԱԹԲԵԿՅԱՆ

*18 ՀՈՒՆՎԱՐԻ 2017Թ. N 05 ՆԻՍՏԻ*

*03 – Ա ՈՐՈՇՄԱՆ*

ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՎ ՆՐԱ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2016Թ. ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրպետության Տեղական ինքնակառավարման մասին օրենքի 18 հոդվածի 32 կետով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հաստատել Գանձաքարի համայնքապետարանի և նրա ենթակայության կազմակերպությունների 2016 թ-ի տարեվերջյանի գույքագրման արդյունքները:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հ Ա Մ Ա Յ Ն Ք Ի Ա Վ Ա Գ Ա Ն Ի

Կողմ -7 դեմ -0 ձեռնպահ -0

1. Արման Բաղմանյանը /ստորագրություն/
2. Գեղեցիկ Դովլաթբեկյանը /ստորագրություն/
3. Ռաղիկ Էլլարյանը /ստորագրություն/
4. Անուշավան Խաչինյանը /ստորագրություն/
5. Գեղամ Մալաքյանը /ստորագրություն/
6. Էմմա Հակոբյանը /ստորագրություն/
7. Սահակ Ստեփանյանը /ստորագրություն/

ԳԱՆՁԱՔԱՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏ Գ.ԴՈՎԼԱԹԲԵԿՅԱՆ

*18 ՀՈՒՆՎԱՐԻ 2017Թ. N 05 ՆԻՍՏԻ*

*04 – Ա ՈՐՈՇՄԱՆ*

ԳԱՆՁԱՔԱՐԻ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 02 հունիսի 2016թ. թիվ 631- Ն որոշման և Տեղական ինքնակառավարման մասին օրենքի 18 հոդվածի 34 կետով

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հաստատել Գանձաքարի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի կազմը՝
   1. 1.Իսկանդարյան Վարդիթեր –հանձնաժողովի նախագահ –Գանձաքարի ԲԱ ՓԲԸ-ի ընտանեկան բժիշկ

1.2. Հակոբյան Էմմա -տեղակալ -համայնքի ավագանու անդամ

1.3. Ցոլյան Նունե -քարտուղար – աշխատակազմի ֆին.բաժնի գլխ.մասնագետ

Անդամներ

1.4. Օհանյան Արարատ –տեղամասային տեսուչ

1.5. Մատինյան Լարիսա – Գանձաքարի ԲԱ ՓԲԸ –ի տնօրեն

1.6.Գեղեցիկ Դովլաթբեկյան- համայնքի ավագանու անդամ

1.7.Անահիտ Ստեփանյան - Գանձաքարի միջն. դպրոցի ուսուցչուհի

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Կողմ -7 դեմ -0 ձեռնպահ -0

1. Արման Բաղմանյանը /ստորագրություն/
2. Գեղեցիկ Դովլաթբեկյանը /ստորագրություն/
3. Ռադիկ Էլլարյանը /ստորագրություն/
4. Անուշավան Խաչինյանը /ստորագրություն/
5. Գեղամ Մալաքյանը /ստորագրություն/
6. Էմմա Հակոբյանը /ստորագրություն/
7. Սահակ Ստեփանյանը /ստորագրություն/

ԳԱՆՁԱՔԱՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏ Գ.ԴՈՎԼԱԹԲԵԿՅԱՆ

*18 ՀՈՒՆՎԱՐԻ 2017Թ. N 05 ՆԻՍՏԻ*

*05– Ն ՈՐՈՇՈՒՄ*

ԳԱՆՁԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2017Թ. ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Տեղական ինքնակառավարման մասին օրենքի 18 հոդվածի 18 կետով և << Տեղական տուրքերի և վճարների մասին >> ՀՀ օրենքի 11, 12, 13 և 14 –րդ հոդվածներով

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հաստատել Գանձաքար համայնքի 2017թ. տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը /հավելված 1 և հավելված 2/:
2. Սույն որոշումն ուժի մեջ է պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող 10-րդ օրը:
3. Չեղյալ համարել 07.11.2016թ. թիվ 01 նիստի 18 –Ն որոշումը /հավելված 1 և հավելված 2/:

Հ Ա Մ Ա Յ Ն Ք Ի  Ա Վ Ա Գ Ա Ն Ի

Կողմ -7  դեմ -0  ձեռնպահ -0

1. Արման Բաղմանյանը /ստորագրություն/
2. Գեղեցիկ Դովլաթբեկյանը /ստորագրություն/
3. Ռաֆիկ Էլլարյանը /ստորագրություն/
4. Անուշավան Խաչինյանը /ստորագրություն/
5. Գեղամ Մալաքյանը /ստորագրություն/
6. Էմմա Հակոբյանը /ստորագրություն/
7. Սահակ Ստեփանյանը /ստորագրություն/

ԳԱՆՁԱՔԱՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏ Գ.ԴՈՎԼԱԹԲԵԿՅԱՆ

Հավելված 1
Գանձաքար համայնքի ավագանու
2017 թ-ի հունվարի 18-ի
05 նիստի 05-Ն որոշման

Գանձաքար համայնքի 2017 թ-ի տեղական տուրքերի դրույքաչափերը

| Հ/հ | Տեղական տուրքերի անվանումը | Օրենքով սահմանված դրույքաչափը դրամ | Ավագանու կողմից սահմանված դրույքաչափը դրամ |
|---|---|---|---|
| 1 | Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար.<br>ա. հիմնական շենքերի և շինությունների համար՝<br>1. մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ | 15000 | 15000 |
| | բ. սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝<br>- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝<br>- 500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝<br>- 1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝<br>- 3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ | 30000<br>50000<br>50000<br>100000 | 30000<br>50000<br>50000<br>100000 |
| | | | |

| | | | |
|---|---|---|---|
| | գ. ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝<br>- մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝<br>- 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար | 3000<br><br>5000 | 3000<br><br>5000 |
| | համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝<br>ա. չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ | 3000 | 3000 |
| 2 | համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար | 5000 | 5000 |
| 3 | համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար | 200000 | 200000 |
| 4 | համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝<br>ա. ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝<br>- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ | Մինչև10001 | 1500 |

| | | | |
|---|---|---|---|
| 5 | . ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝<br>- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ մինչև տասը հազար մեկ դրամ, | Մինչև10001 | 1500 |

Գանձաքարի համայնքապետ Վ.Դովլաթբեկյան

Հավելված 2
Գանձաքար համայնքի ավագանու
2017թ-ի հունվարի 18-ի
05 նիստի 05-Ն որոշման

## Գանձաքար համայնքի 2017թ-ի տեղական վճարների դրույքաչափերը

| Հ/ h | Տեղական վճարների անվանումը | Ավագանու կողմից սահմանված դրույքաչափը Դրամ |
|---|---|---|
| 1 | համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար. | 5000 |
| 2 | --ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար. | 5000 |
| | -- ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար. | 5000 |
| | ----համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար. | Մրցույթի կամ աճուրդի հանված առարկայի նախնական գնի 5 %-ը |
| 3 | 1.Վճար ծնողական միջոցներից մանկապարտեզ հաճախող երեխաների համար | 2000 |

Գանձաքարի համայնքապետ Վ.Ղովլաթբեկյան